



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 4**

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2017 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:
2. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էր նաև ԵՊՀ ռեկտոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆեսոր Արամ Հրաչիկի Սիմոնյանը:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում գիտխորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 24 անդամներից նիստին մասնակցում է 22-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

Քանի որ գիտական խորհրդի նիստը հիմնականում նվիրված էր հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությանը, ուստի անհրաժեշտաբար ընտրվեց նիստը վարող նախագահ: Միաձայն նախագահ ընտրվեց բ. գ. դ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը: Նա ողջունեց գիտխորհրդի բոլոր մասնակիցներին և էլույթի համար ձայնը տվեց պրոֆ. Ա. Ավագյանին: Վերջինս մասնավորապես ասաց.

- Կարծում ենք՝ ավելորդ չէ այստեղ նշել, որ ֆակուլտետում դեկանատի գործավարությունը, դասերի կազմակերպումը և գիտական աշխատանքների իրականացումը ընթացել է բավարար:

Ընթացիկ տարում կայացել է ֆակուլտետային գիտխորհրդի 10 նիստ:

Ֆակուլտետում մինչև վերջերս գործել են գիտական աստիճաններ շնորհող 2 խորհուրդներ: Հատկապես ակտիվ է եղել մանկավարժության խորհուրդը: Ցավոք, գրականության գծով գիտական աստիճաններ հայցողների թիվը գնալով պակասում է: Բայց ավելի ողբերգական է դոկտորականների վիճակը:

Ֆակուլտետում գործում են ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը: Ֆակուլտետում դասընթացներ են անցել մի քանի արտասահմանցի ուսանողներ, ասպիրանտներ և ուսումնասիրողներ:

Ֆակուլտետը ամենաակտիվ մասնակցությունն է բերել հանրապետական, միջազգային, միջբուհական և համալսարանական գիտական մի շարք նստաշրջաններին, խորհրդակցություններին, կոնֆերանսներին, վարել բաժանմունքների նիստեր: Բազմաբնույթ են եղել նաև ամբիոնների կողմից կազմակերպված գիտական և ուսումնական միջոցառումները, կուրսերի կողմից կազմակերպված հավաքները, էքսկուրսիաները, քննարկումները, մրցույթները:

Հաշվետու ժամանակամիջոցում ֆակուլտետը գործնական մասնակցություն է ունեցել բուհական և համալսարանական կյանքին վերաբերող զանազան նախագծերի, ուսումնական ու կրթական ոլորտներին վերաբերող առաջարկությունների, որոշումների և այլ գրությունների քննարկումներին, կատարել առաջարկություններ և հայտնել իր նկատառումները:

Մեծ է ֆակուլտետի կապը հանրապետության դպրոցների հետ՝ ավելի քան 74 այցելություն է կատարվել մարզային և երևանյան դպրոցներ: Համալսարանում այդ ասպարեզում 2-րդ տեղը գրված ֆակուլտետը ունեցել է շուրջ 40 այցելություն:

Ֆակուլտետի մի շարք դասախոսներ էլ այցելել են զորամասեր, կարդացել դասախոսություններ, փոխադարձ կապեր են հաստատվել Արցախի համալսարանի և մեր ֆակուլտետի միջև: Մի շարք ուսանողներ և դասախոսներ մասնակցել են ծառատունկերին:

Առաջին կուրսեցիների համար ֆակուլտետը կազմակերպել է սեպտեմբերի 1-ի դիմավորումը, ինչպես ամեն տարի, միջոցառումը ավարտվել է Կոմիտասի անվան պանթեոն այցելելով: Նույն առաջին կուրսեցիներին ստուգման գրքույկներ են հանձնվել Խ. Աբովյանի տուն-թանգարանում:

Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը, ինչպես տեսնում ենք, տպագրել է տասնյակ մասնագիտական գրքեր, գրել հարյուրավոր հոդվածներ, ունեցել գիտական զեկուցումներ թանգարաններում և գիտական հիմնարկներում:

Ֆակուլտետը գիտական, ստեղծագործական ու աշխատանքային կապերի մեջ է ՀՀ ԳԱ հասրակագիտական բաժանմունքի, Մատենադարանի, Սփյուռքի նախարարության, գրողների միության, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և մի շարք բուհերի հետ:

Ֆակուլտետի մի շարք առաջատար դասախոսներ իրենց մասնակցությունն են բերում ԵՊՀ կառավարման խորհրդի, գիտական խորհրդի, գրահրատարակչության աշխատանքներին, անդամ կազմում մշտական կամ ժամանակավոր տարբեր հանձնաժողովների: Իսկ կոլեկտիվի մի շարք անդամներ էլ մասնակցում են հանրապետական նշանակություն ունեցող կառույցների աշխատանքներին՝ Լեզվի բարձրագույն խորհուրդ, գրողների միություն, Նախագահի և պետական մրցանակներ շնորհող մշտական հանձնաժողովներ, հանրապետական օլիմպիադաների հանձնաժողովներ, աստիճանաշնորհող խորհուրդներ, հայ գրողների թանգարանների գիտական խորհուրդներ և այլն:

Աշխույժ է եղել նաև ուսանողական կյանքը: Տասնյակ առկա և հեռակա ուսանողներ զեկուցումներ են կարդացել համալսարանական նստաշրջաններում, ամռան ամիսներին ջոկատավարություն արել ճամբարներում, այցելել դպրոցներ, ծերանոցներ, որբանոցներ և գրքեր ու նվերներ տարել: Ս/թ. նոյեմբերի 17-ին ուսանողներն իրենք են ստանձնել ֆակուլտետի և ամբիոնների ղեկավարումը: Ֆակուլտետ են այցելել Երևան քաղաքի մի շարք դպրոցների ավագ դասարանների աշակերտներ:

Հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետը կազմակերպել է Ավետիս Ահարոնյանին նվիրված և «Չարենցյան ընթերցումներ» գիտաժողովը (վաղը տեղի է ունենալու «Աբեղյանական ընթերցումները»), «Մաշտոցից մինչև մեր օրերը», Հայոց լեզվի ամբիոնի 13 անուն

գրքերի նշանավորման միջոցառումը, «Գրիգոր Ղափանցյան 130»-ը: «Բարբառային ընթերցումները», «Վահան Տերյան», «Գրիգոր Շղթայակիր Պատրիարք»:

Ֆակուլտետը համագործակցում է նաև համալսարանական ֆակուլտետների հետ՝ պատմություն, արևելագիտություն, ռումանագերմանական բանասիրություն, ռուսական և այլն, կազմակերպել է գրքի շնորհանդեսներ, ֆակուլտետ հրավիրել գրողներ, գործիչներ, սփյուռքահայ մտավորականներ:

Ֆակուլտետը կազմակերպել է դպրոցականների օլիմպիադա, դասախոսներ են մեկնել մարզեր, ստուգվել և գնահատվել է 630 աշխատանք:

Համալրվել է ֆակուլտետի «Վերնատուն» ընթերցասրահի գրական ֆոնդը՝ (Աբաջյան, Մակարյան, ուսանողներ՝ «գրքի օրվա» առթիվ, Ավագյան):

Ֆակուլտետը կազմակերպչական մեծ աշխատանքներ է տարել Արցախում կազմակերպվող ամենամյա պոեզիայի միջազգային փառատոնի անցակցման համար:

Ֆակուլտետում անց է կացվել ասպիրանտների, հայցորդների և մագիստրոսների ընդունելության քննություններ:

Երևան քաղաքի մի շարք դպրոցներում և հիմնարկներում «Մայրենիի օրվա» առիթով մասնագիտական դասախոսություններ են կարդացվել: Ֆակուլտետը միջոցառումներ է իրականացնում համալսարանի 100-ամյակին ընդառաջ:

Հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետը մի շարք կարծիքներ է տվել գիտական աշխատանքների, գրքերի մասին:

Մենք անդրադարձանք ֆակուլտետի ամենօրյա աշխատանքների միայն մի մասին: Բայց չենք կարող անտեսել նաև բացթողումներն ու թերացումները, որոնց մի մասը օբյեկտիվ է, մյուսը՝ սուբյեկտիվ:

1. Մեզ բոլորիս անհանգստացնում է դիմորդների հարցը՝ թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի: Բակալավրը գնալով նվազում է, ավելի սարսափելի է նրանց որակի հարցը. պատճառները հայտնի են՝ սոցիալական վիճակ, արտագաղթ, դպրոցների խայտառակ վիճակ: Այս ամենը հանգեցրել է դասախոսների աշխատավարձերի խիստ անկման: Այսօրվա դասախոսը ստանում է ուսուցչից էլ պակաս վարձատ-

րություն (վերջիններս օգտվում են ամառային սոցփաթեթներից, մի քանի արձակուրդներից և այլն):

2. Կարծում ենք՝ չի արդարացնում այն նոր կարգը, ըստ որի վերացվեցին հավելավճարների աստիճանները:
3. Թեև ֆակուլտետում լսարանների պատճառով դասեր չեն տապալվում, սակայն անհրաժեշտ է մտածել այս մասնաշենքի վերնահարկում նոր կառույց կառուցելու մասին.՝ դասախոսները սենյակ պետք է ունենան, պրոֆեսորները՝ կաբինետներ, ուսանողները՝ համակարգչային լսարաններ:
4. Մեր որոշ դասախոսների համար դժվարություններ են հարուցվում դասերին ժամանակին ներկայանալիս, որի պատճառը ավտոպարկերի սղությունն է:
5. Ուսանողների կողմից դժգոհություն կա համալսարանի մինուճար ավտոբուսի տրամադրման համար, որի պատճառով երկրագիտական, գործնական, ուսումնական կամ հովանավորչական միջոցառումներ շատ քիչ են իրականացվում:
6. Անհրաժեշտ է շուտափույփ համալրել համալսարանական գրադարանային ֆոնդը, դասական գրողների և լեզվաբանների գրքերով. եղածները վաղուց մաշվել և քայքայվել են:
7. Պետք է մեծացնել նաև գիրք գրող դասախոսին տրվելիք օրինակների քանակը:
8. Նորից, արդեն ո՞րերորդ անգամ, առաջարկում ենք տնտեսական հաշվարկ կատարել՝ 5-ամյա կրթություն (որից մեկը մագիստրատուրա) պարտադիր համալսարանական կրթություն անցնելու համար:

Շնորհակալություն:

Այնուհետև գիտխորհրդի ելույթ ունեցող անդամները՝ պրոֆեսորներ Ս. Մուրադյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը և դոցենտ Վ. Պետրոսյանը, բարձր գնահատեցին ֆակուլտետի ղեկանի աշխատանքը հաշվետու ժամանակաշրջանում, հատուկ ընդգծեցին ֆակուլտետում տիրող բարոյահոգեբանական այն առողջ մթնոլորտը, որի ստեղծման մեջ անտարակուսելիորեն իր ներդրումն ունի նա:

Հայ բանասիրության ֆակուլտետի ղեկանի տարեկան աշխատանքը գնահատվեց բավարար:

Նիստն ամփոփեց ԵՊՀ ռեկտոր ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պ. գ. դ., պրոֆեսոր Արամ Հրաչիկի Սիմոնյանը: Իր խոսքի սկզբում գոհունակություն հայտնելով հայ բանասիրության ֆակուլտետում ընթացող գիտամանկավարժական աշխատանքներից, այդ թվում դրական գնահատելով ֆակուլտետի դեկան պրոֆեսոր Արծրուն Ավագյանի գործունեությունը՝ ռեկտորն ընդգծեց, որ վերջին տարիների տենդենցն այն է, որ գիտական խորհուրդներում շարունակ գովերգում են դեկաններին և սակավ են խոսում թերությունների մասին: Մինչդեռ անելիքները շատ են: Նա նկատեց, որ այն հարցերը, որոնք ուղղվում են իրեն (բակալավրիատի ու մագիստրատուրայի ծրագրերի բարեփոխումներ, նոր հավելվածարների հաշվարկման կարգ, գրքերի տպագրություն և այլն), իրենց պատասխաններն արդեն ունեն ԵՊՀ պորտալներում. ԵՊՀ-ն ունի պատկառելի՝ 99 կայք: Ամբողջ խնդիրն այն է, որ ներկաներից քչերն են հավանաբար օգտագործում այն, այլապես, օրինակ, այնտեղից կիմանայիք, որ ամանորյա տոներից անմիջապես հետո սպասվում են լուրջ փոփոխություններ, այդ թվում՝ բակալավրիատի ու մագիստրատուրայի ծրագրերի բարեփոխումների առիթով:

Իր խոսքում ԵՊՀ ռեկտոր պարոն Ա. Սիմոնյանը խոսեց նաև իր մտահոգությունների մասին: Նա մասնավորապես ընդգծեց, որ զարմանում է համատարած անտարբերությունից. չէ՞ որ ապրում ենք սրընթաց զարգացող ժամանակաշրջանում. տեղի է ունենում արդյունաբերական 4-րդ հեղափոխությունը. այսօրվա մասնագիտությունների շուրջ 60%-ը անհետանալու է, այնպես որ պետք է համախմբվել և միասին մտածել մեր անելիքների մասին:

ԵՊՀ ռեկտոր պարոն Սիմոնյանը, ամփոփելով իր ելույթը, վերստին հիշեցրեց, որ ռեկտորատը, քաջ գիտակցելով այս և հաջորդ մի քանի տարիների նյութական դժվարությունները, հեռատեսորեն գնացել է անհրաժեշտ խնայողությունների և այժմ տնօրինում է որոշակի կուտակումների, որոնք հնարավորինս կհեշտացնեն անցման դժվարությունները:

Նիստը հայտարարվեց փակված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**

**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**